

**ՎԱՐԱՆԴ ՓԱՓԱԳՅԱՆԻ «ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ
ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ»**

Մի մոռացված գրքույկի և նրա անմոռաց հեղինակի մասին*

Բանալի բառեր – Բեյրութ, գրքույկ, Հայ դատ, ազգային ռազմավարություն, Ղարաբաղ, Սփյուռք, հայրենիք, ազատագրական կռիվ, անկախ պետականություն, ՀՅ Դաշնակցություն:



2020 թ. սեպտեմբերի 12-ին Բեյրութում հանկարծամահ եղած **հավատավոր դաշնակցական** և **ինքնատիպ մտածող** Վարանդ Փափագյանի հիշատակին մեզանում այսօր հնչող սովորական ցավակցությունները հերթական անգամ ապացուցում են, որ դժբախտաբար չենք կարողանում ըստ արժանվույն գնահատել այն հատուկենտ անհատականություններին, ովքեր իրենց գաղափարներով են եղանակ ստեղծել ՀՅ Դաշնակցության ներսում: Մինչդեռ նրա

նման մտածող ու մտահոգ դաշնակցականների գաղափարների արժևորումը թույլ կտա մեզ դուրս գալ ընթացիկ քաղաքական թոհուրոհի տաղտուկից ու կրկին գաղափարականացնել կուսակցությունը:

Վարանդ Փափագյանը կամ ուղղակի **Վարանդը** վերջին տասնամյակներին կուսակցության գաղափարական անդաստանում եղանակ ստեղծած այն ինքնատիպ գործիչն էր, ով մարմնավորում էր ՀՅԴ արժեհամակարգն իր ամբողջության մեջ՝ երբեք չենթարկվելով հայաստանյան-խորհրդային թանձր նստվածքի կամ էլ արևմտյան նորագույն հովերի փոխբացասող, բայց հավասարապես օտար ազդեցություններին:

1941 թվականին Բեյրութում ծնված Վարանդ Փափագյանը թեև դաշնակցականների սփյուռքյան երկրորդ սերնդի ներկայացուցիչ էր, բայց պահպանել էր իր անեղծ գաղափարական կապը կուսակցության Հիմնա-

Վեմ համահայկական հանդես, ԺԲ (ԺԸ) տարի, թիվ 3 (71), հուլիս-սեպտեմբեր, 2020

* Հոդվածն ընդունվել է տպագրության 21.10.2020:

դիր ու Անկախության սերունդների հետ՝ միաժամանակ լռությամբ մերժելով ժամանակի մեծ ու փոքր գայթակղությունները:

Իր հոր՝ 1915 թվականին ծնված բժիշկ Բաբկեն Փափագյանի նման Վարանդը ամենևին էլ չէր փոխվել արաբական միջավայրի ազդեցությունից: Բեյրութի հայաշունչ մթնոլորտում ժամացույցը կանգ էր առել 1915 թվականի վրա. տարիներն անցնում էին, բայց հայ մարդիկ մնում էին ազգային հիշողության ու արդարության վերականգնման պահանջատերերը: Ավելին՝ 1960-ականներից Հայ դատի պայքարն աշխուժացրած ՀՅԴ սփյուռքյան սերնդի ականավոր ներկայացուցիչների ջանքերով Լիբանանում այդ հիշողությունն ավելի է առարկայանում, որպեսզի 1970-ական թվականներին խոսքից վերածվի գործի՝ զինյալ պայքարի: Բնական է, որ նման մթնոլորտում հասունացած ու քաղաքական մկրտություն ստացած երիտասարդներն ապրում էին միաժամանակ երկու կյանքով, որոնցից մեկը լիբանանյան թոհուրոհի մեջ էր, իսկ մյուսը՝ սարերի հետևում մնացած բռնազավթված հայրենիքում: Լիբանանի քաղաքացիական պատերազմի մթնոլորտում 1970-1980-ականների Բեյրութը կրում էր նաև իրավագրկված ժողովուրդների համար գրավիչ դարձած ձախակողմյան ուղղվածության միջազգային հեղափոխական շարժումների ու կազմակերպությունների միջնորդավորված ազդեցությունը, ինչը գաղափարական նոր լիցքեր էր հաղորդում ՀՅ Դաշնակցության նոր սերնդի ներկայացուցիչներին: Ուստի նման միջավայրում մեծացած ու հայրենասիրության առաջին դասերը ստացած երիտասարդները ժամանակի ընթացքում նաև իրենց ուրույն հայացքն էին ձևավորելու ինչպես Հայ դատի պայքարի հեռանկարների, այնպես էլ կուսակցության անցած ուղու և հետագա անելիքների վերաբերյալ: Առավել ևս որ նրանց մեջ կային Վարանդ Փափագյանի նման մտածող ու քննախույզ, բայց միաժամանակ կամային ու համառ անհատականություններ, ովքեր չէին ծնվել իրադարձությունների հասարակ դիտորդները դառնալու համար: Ցանկացած հարցի վերաբերյալ Վարանդն ուներ իր սեփական կարծիքը, որը երբեք չէր թաքցնում ոչ ժողովներում և ոչ էլ որևէ ղեկավարի հետ ունեցած հարաբերություններում: Իր նման հատկանիշների շնորհիվ Վարանդ Փափագյանը մի քանի տասնամյակ ուրույն դիմագիծ էր հաղորդում մեր կուսակցական կյանքին, բայց միաժամանակ խիստ յուրօրինակ տեղ էր զբաղեցնում նրա ներսում: Նա միշտ այնտեղ էր, որտեղ հարկավոր էր **գործ** ու մանավանդ **գաղափար**, բայց երբ գալիս էր դրանք ըստ արժանվույն գնահատելու պահը, Վարանդը «պահեստագործում» էր հայտնվում:

Վարանդը Հայաստանում էր Սպիտակի երկրաշարժի օրերին, Ղարաբաղում էր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համար բախտորոշ 1992 թվականին, երբ Արթուր Մկրտչյանի հետ միասին ԼՂՀ կազմավորմանն ուղղված առաջին քայլերն էր ձեռնարկում, իսկ նրա եղերական

մահվանից հետո՝ 1992 թվականի հաղթական մայիսին, տանկի վրա բարձրացած, շրջում էր ազատագրված, բայց դեռևս թշնամուց չմաքրված Շուշիի փողոցներում:

Վարանդի համար Դաշնակցությունը փայլփլուն խաղալիք չէր կամ հերոսական անցյալի վերհուշ, որի միջոցով կարելի էր ուշադրությունը կենտրոնացնել սեփական անձի վրա և հետաքրքիր դարձնել ներկան: Նա ապրում էր Դաշնակցության գաղափարներով և չէր հանդուրժում դրանցով քողարկվելու փորձերը, ուստի կարելի էր չհամաձայնել Վարանդի հետ, կարելի էր հակադարձել նրա որոշ հարցադրումներին, բայց չէր կարելի կասկածի տակ դնել նրա **անկեղծությունը**:

Վարանդ Փափագյանի անկեղծության ու դրան գումարված տեսաբանական մտքի խորության վկայությունն է ժամանակին մեզանում անհրաժեշտ ուշադրության չարժանացած **«Հայ ազգային ռազմավարությունը»** ուշագրավ գրքույկը, որում ուսանելի շատ բան կա մեր ներկա ու մանավանդ երիտասարդ սերնդի համար: Արդեն հեռավոր դարձած 1993 թվականին հրապարակված այդ 39 էջանոց բավականին խիտ շարադրանքի նորովի ընթերցման ընթացքում մենք չգտանք մի հաստատում կամ եզրակացություն, որը չի կրում Վարանդի ինքնատիպ մտածողության կնիքը: Ավելին՝ նրա դրույթներն այնքան արդիական են մեր օրերում, որ կարելի է միայն զարմանալ Վարանդ Փափագյանի հեռատեսության վրա:

Անշուշտ, սույն հրապարակումը գրախոսություն չէ՝ այդ բառի դասական իմաստով, քանզի Վարանդի շարադրանքը մենագրություն չէ, այլ ավելի շուտ՝ սեղմ կոնսպեկտ, որի յուրաքանչյուր պարբերություն կարելի է բացել մի ծավալուն գրքի տեսքով: Նման լակոնիզմն ու միաժամանակ ճշգրտությունը Վարանդի մտածողության հիմնական առանձնահատկության՝ ինտելեկտուալ շիտակության արտահայտությունն էին, ինչը միշտ էլ որոշակի սրություն էր հաղորդում նրա հարցադրումներին: Վարանդի մոտ մեր նախորդ սերունդների հեղափոխական պայքարից ու գաղափարական որոնումներից մնացած մի **նստվածք** կար, որը «դիվանագիտական լեզվի» չէր փոխակերպվել՝ դրանից բխող անկեղծության պակասով հանդերձ: Վարանդի դեմքին չկար դիվանագետի շպար. նա ասում էր այն, ինչի մասին մտածում էր:

Գրախոսվող գրքույկը գրվել է 1990-ականների սկզբներին, երբ Ղարաբաղյան պատերազմը դեռ չէր ավարտվել, բայց ավելի քան ակնհայտ էր, որ մենք պատվով ենք դուրս գալու այդ քնությունից՝ կանգնելով ավելի բարդ ու բազմաշերտ խնդրի՝ պետականության մարտահրավերի առջև: Եվ քանի որ մենք՝ իբրև կուսակցություն, այդպես էլ չհաղթահարեցինք այդ հիմնական մարտահրավերը, ուստի մնացինք ձիշտ այն նույն ճամփաբաժանին, որը Վա-

րանդն ուրվագծել էր դեռ հեռավոր 1993 թվականին հրապարակված իր գրքույկում:

Այժմ, երբ կրկին թևակոխում ենք Ղարաբաղյան անավարտ պատերազմի վերջին ու վճռական հանգրվանը, արժե նաև վերհիշել դրա իրական դասերը՝ Վարանդ Փափազյանի գրքույկի վերընթերցման միջոցով: Դա անհրաժեշտ է հասկանալու համար տվյալ պատերազմին ընթացք տված խորքային աշխարհաքաղաքական ազդակները, որոնք բացահայտվել ու արձանագրվել են Վարանդ Փափազյանի կողմից: Պատճառն այն է, որ Վարանդը ներազգային կյանքում աշխարհաքաղաքական նախապատվություններով չէր առաջնորդվում, ուստի կարողանում էր ուրվագծել հայկական շահի հստակ ընկալման վրա հիմնվող ռազմավարական մտածողության հիմքերը:

«Ազգային ճգնաժամ» ենթագլխով սկսվող այս գրքույկի հենց առաջին էջերում հանդիպում ենք ԽՍՀՄ կառավարելի փլուզման գործընթացին տրված այն ձգբիտ գնահատականին, որն արձանագրում է Արևելյան Եվրոպայից ու Մերձբալթիկայից Ռուսական կայսրության նահանջի սահմանները, բայց բաց է թողնում նրա մնացած տարածքի աշխարհաքաղաքական պատկանելիության հարցը, ինչը խիստ այժմեական հաստատագրում է մեր օրերի համար, երբ օրակարգային է դառնում նախկին ԽՍՀՄ բոլոր հանրապետությունների կարգավիճակի հստակեցման խնդիրը: Ուստի Վարանդ Փափազյանի ձգբիտ դիտարկմամբ՝ 1990-ականներին Ղարաբաղը դարձավ այն ռազմաքաղաքական դաշտը, որտեղ նահանջող կայսրությունը փորձարկեց «համաթրքական ու համախլամական միտումները արգելակող հայկական գործոնի արժեքը և կարողականությունը»¹: Այդ պատճառով «Ղարաբաղում սկսվեց ազատագրական կռիվ՝ մի կողմից ռուսական քաղաքականության միտումների, մյուս կողմից՝ իբրև արդյունք ՀՅԴ-ի աշխարհային ջանքերի»², ինչի հետևանքն էր ոմանց զարմանքը հարուցած «հաղթանակ-պարտություն հերթափոխը»³:

Այդ նույն՝ հեղհեղուկ դրության ներքաղաքական անդրադարձը հեղինակը ներկայացրել է իր հաջորդ՝ «Անդիմագիծ Հայաստան» ենթակետում: Այստեղ ավելի քան հիմնավորված քննադատության ենթարկելով նորակախ Հայաստանի իշխանությունների ձախողված տնտեսական ու ընկերային քաղաքականությունը՝ Վ. Փափազյանը միաժամանակ բացահայտել է այն իրողությունը, որ 1990-ականների այդ արհավիրքի պատասխանատուն միայն օրվա իշխանությունը չէր: Մտավորականությունն ու ընդդիմադիր ուժերը դրանում ունեին իրենց անուղղակի մեղսակցության բաժի-

1 Փափազյան Վ., Հայ ազգային ռազմավարությունը, Եր., 1993, էջ 8:

2 Նույն տեղում, էջ 9:

3 Նույն տեղում:

նը, քանզի Հայաստանում չկայացավ իշխանության այլընտրանքը: Սա միանգամայն ճշգրիտ գնահատական է, ինչը հետագայում ապացուցվեց այն պարզ իրողությամբ, որ անգամ սեփական ձախողումից հետո էլ Տեր-Պետրոսյանի իշխանությունն ինքն ընտրեց իր «այլընտրանքը», այն էլ՝ միայն արտաքին-քաղաքական նախապատվությունների տարբերության դաշտում: 1990-ականներին Հայաստանում ընդդիմությունն իր «մակերեսային քաղաքականության» պատճառով պարտվեց երկրի խորքում առկա «համակարգին», որն էլ գտավ սեփական դիմակափոխության ցանկալի տարբերակը: Բայց նման դիմակափոխության «ազգային» ցուցանակն ապահովելու խնդրի լուծմամբ մենք այդպես էլ չկարողացանք ազգային ռազմավարության դաշտ տեղափոխել երկրի զարգացման ընթացքը, ուստի պետականության մարտահրավերը անլուծելի խնդիր մնաց մեզ համար:

Մինչդեռ իր գրքույկի երկրորդ՝ «Ազգային ռազմավարությունը» ենթագլխում ներկայացնելով ազգ-հայրենիք-պետություն շարքերի դաշնակցական ընկալման հիմունքները՝ Վ. Փափազյանը պատմական լայն էքսկուրսի միջոցով դեռևս 1993 թվականին ցույց էր տալիս, որ «Չկա ազգային կազմակերպվածության ավելի հզոր միջոց, քան ազգային գերիշխան պետությունը»⁴: Արտաքուստ խիստ պարզունակ թվացող այս հարցադրումը տվյալ պատմաշրջանում խիստ արդիական էր սփյուռքյան տարիներից մնացած՝ կուսակցությունը պետության հետ նույնացնելու մոլորության կենսունակության պատճառով:

Իր աշխատության երրորդ ենթագլխում՝ «Հայերը և հայ ազգը», Վ. Փափազյանը դրսևորել է հայոց պատմության փիլիսոփայության խոր իմացություն՝ սկսած Վարդան-Վասակ բանավեճի շուրջ 20-րդ դարասկզբից մեզանում սկիզբ առած «իրատեսական» վերարժևորումների սնանկության բացահայտումից մինչև հայ ազատագրական պայքարի ու ՀՅ Դաշնակցության պատմական առաքելության խոր ընկալումը: Մեր օրերում խիստ արդիական են նաև հայության շրջանում լուրջ ավերածություններ գործող հատվածականության համախտանիշին տրված նրա դիպուկ գնահատականները:

Ուշացումով, բայց ոչ ուշացած գրախոսվող այս գրքույկի ամենաարժեքավոր մասը «Հայ ազգային քաղաքականությունը» ենթագլուխն է, որում տրվում են կրկին միջազգային բեմահարթակ վերադարձած Հայաստան պետության արտաքին քաղաքական, ներազգային ու ներպետական առաջնահերթությունների հստակ սահմանումները: Հայ ազգի մեկության հիմքի վրա նրա հայրենիք Հայաստանի ու Սփյուռքի քաղաքական միասնության աշխատակարգերի մասին Վարանդ Փափազյանի հստակ բանաձևումները դաշնակցական մտքի դասականների նախորդ հարցադրումների խտացումն

4 Նույն տեղում, էջ 20:

են ու միաժամանակ դրանք 1990-ականների պայմաններին ու միջավայրին համապատասխանեցնելու հաջողված տեսաբանական փորձերը:

Վարանդը սփյուռքյան ինքնության փնտրտուքի համոզված հակառակորդ էր: Նրա համար Հայաստանն էր աշխարհացրիվ հայության միակ հայրենիքը, ուստի, նրա կարծիքով, «ազգային պետության գոյառումը» այն պայքարի դաշտն է, որի արժեքանական հիմքերը դրվել են Ղարաբաղյան պատերազմի միջոցով: Այդ պատճառով նա պահանջում էր Արցախի պայքարը 1990-ականների հետխորհրդային աշխարհաքաղաքական շախմատից բարձրացնել «ազատագրական պայքարի մակարդակի և վերածել ամբողջ ազգի գաղափարական դրոշի և քաղաքական ու տնտեսական գործի առանցքի»⁵: Քանզի Վարանդը համոզված էր, որ Հայաստանի ու Ադրբեյջանի արանքում ճոճանակի վերածված Արցախը ժամանակի ընթացքում դուրս է գալու երկու նորանկախ երկրների հետկայսերական պատանդառման պարզ գործիքի կարգավիճակից: Դրա համար, նրա կարծիքով, միակ ձիշտ ճանապարհն ընտրել էր ինքը՝ արցախահայությունը. «...**նա անդրադարձավ, որ իրեն վիճակված է կռվել, դիմանալ և նորից կռվել, մինչև որ հստականա Հայաստանի քաղաքականությունը և բարձրանա շրջանային լուրջ գործոնի մակարդակին** (ընդգծումը մերն է – Գ. Խ.)»⁶:

Ներկայումս, երբ Հայաստանի քաղաքականությունն աստիճանաբար բարձրանում է շրջանային լուրջ գործոնի մակարդակին, մենք կանգնած ենք նաև Վարանդ Փափազյանի այս կանխատեսման իրականացման նախաշեմին: Ուստի, վերընթերցելով նրա «Հայ ազգային ռազմավարությունը» գրքույկը, պարտավոր ենք խորին հարգանքով ու երախտագիտությամբ հիշել կյանքից վաղաժամ հեռացած ինքնատիպ մտածող ու հավատավոր դաշնակցական Վարանդ Փափազյանին:

Հ. Գ. – անձնական հիշողություններից:

2005 թվականի վաղ գարունն էր: Սպասում էի վաղուց արդեն պատրաստ դոկտորական ատենախոսությանս պաշտպանությանը, երբ ընկերները գրեթե պարտադրանքով սուր հարբուխով հիվանդ վիճակում ինձ նստեցրին ինքնաթիռ՝ Սոֆիայում Քր. Միքայելյանի նահատակության 100-րդ տարելիցին նվիրված գիտաժողովին մասնակցելու համար: Միջոցառման գիտական մակարդակը բավականին ցածր էր, ուստի ինձ՝ մասնագետ-պատմաբանիս համակած գերակայության զգացողությունն ու ինտելեկտուալ ձանձրույթը ջերմության ու հարբուխի ազդեցությամբ

⁵ Նույն տեղում, էջ 36:

⁶ Նույն տեղում:

սկսեցին փոխարկվել ննջելու անտանելի ցանկության: Բայց հանկարծ արթնացա մի դղրդոցից. Վարանդն էր ներկայացնում Քրիստափորի հեղափոխական պայքարի մարտավարությունը: Նա այնպիսի համոզմունքով ու ոգևորությամբ էր խոսում, կարծես ինքն այնտեղ էր՝ Գուրան-Բարձրավանդակում՝ Հրայրի ու Գուրգենի կողքին: Երբ Վարանդն ուղղակի «քանդեց-հավաքեց» քրիստափորյան նրբին մարտավարության բոլոր դետալները, ջերմության ու հարբուխի պատճառով թմրած իմ գիտակցությունը վերջնականապես արթնացավ, բայց ինձ համակեց ճիշտ հակառակ զգացողությունը: Վարանդի համեմատ ինձ սկսնակ երեխա զգացի դոկտորականիս թեմայի՝ ՀՅԴ պատմության վաղ շրջանի գիտական ընկալման ասպարեզում և սկսեցի ինքս ինձ հարց տալ՝ մեզանից ով է ապագա դոկտորը, և ինչ կոչում կունենար Վարանդ Փափազյանը, եթե ապրեր Հայաստանում ու ստեղծագործեր ի փառս հայրենի գիտության...

Գևորգ Ս. Խուդինյան
Պատմ. գիտ. դոկտոր

Summary

“ARMENIAN NATIONAL STRATEGY” BY VARAND PAPAZYAN

About a forgotten booklet and its unforgettable author

Gevorg S. Khoudinyan
Doctor of Sciences in History

A well-known figure of the ARF Dashnaktsutyun Varand Papazyan, an intellectual and a critically thinking person, has passed away. The Armenian community did not pay due attention to a small but very interesting booklet by V. Papazyan entitled “Armenian National Strategy”, which was published in 1993.

V. Papazyan’s study is not a monograph, but rather a concise synopsis, each title of which can be presented as a separate monograph. Such laconicism and conciseness of the text is characteristic of the intellectual sincerity of thinker V. Papazyan.

In the first title “National Crisis” V. Papazyan studied the process of the collapse of the USSR and its geopolitical consequences for the South Caucasus. According to the author, this process left open the question of our region’s belonging to a certain zone of influence, but so far it has retained the dominant influence of the legal successor of the USSR – Russia.

V. Papazyan in his research also touched upon the internal political processes of the early 1990s in Armenia. Presenting his vision of the history of the national

liberation struggle of the Armenian people, the author moved on to the main parts of his work – “Political Strategy” and “Armenian National Strategy”. Here V. Papazyan formulated his idea of the unity of the Armenian political nation. V. Papazyan was a principled opponent of the so-called diaspora identity of Armenians. For him, the homeland of the Armenians is United Armenia, and the first phase of its restoration is the struggle of Artsakh for reunification with the Republic of Armenia.

Резюме

«АРМЯНСКАЯ НАЦИОНАЛЬНАЯ СТРАТЕГИЯ» ВАРАНДА ПАПАЗЯНА

Об одной забытой книжке и его незабываемом авторе

Геворг С. Худинян

Докт. ист. наук

Ушел из жизни известный деятель АРФ Дашнакцутюн Варанд Папазян - интелектуал и критически мыслящий человек. Армянская общественность не обратила должное внимание на небольшую, но очень интересную книжку В. Папазяна «Армянская национальная стратегия», которая была издана в 1993 году.

Исследование В. Папазяна не монография, а скорее всего сжатый конспект, каждое заглавие которого можно изложить как отдельная монография. Такой лаконизм и сжатость текста характерна для интелектуальной искренности В. Папазяна-мыслителя.

В первом заглавии «Национальный кризис» В. Папазян исследовал процесс распада СССР и его геополитические последствия для Южного Кавказа. По мнению автора этот процесс оставил открытым вопрос принадлежности нашего региона к определенной зоне влияния, но пока сохранил доминирующее влияние правопреемницы СССР - России.

В. Папазян в своем исследовании коснулся также внутривосточных процессов начала 1990-х годов в Армении. После этого представляя свое видение истории национально-освободительной борьбы армянского народа, автор перешел к основным частям своей работы - «Политическая стратегия» и «Армянская национальная стратегия». Здесь В. Папазян сформулировал свое представление о единстве армянской политической нации. В. Папазян был принципиальным противником так называемой диаспоральной идентичности армян. Для него родина армян это Единая Армения, а первая фаза его восстановления - борьба Арцаха за воссоединение с Республикой Армения.